ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Վարդենիս** **24/08/2022**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Մելանյա Եփրեմյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Աիարոն Խաչատրյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Չարոյանը**

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող MT3-82.1 անիվավոր տրակտորը և 385 B մինի ամբարձիչ տեխնիկաները՝ համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել ''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին:

2.''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրված YT0* 804 անիվավոր տրակտորը հետ վերադարձնել Վարդենիսի համայնքապետարանի հաշվեկշռին:

3.Ավտոմեքենաները, մեխանիզացիաները և սարքավորումները՝ Վարդենիսի համայնքի բոլոր գերեզմանատներում բնակչությանը ծառայություններ մատուցելու պարագայում, տրամադրել անվճար:

Առաջարկությամբ հանդես եկավ Կարեն Մկրտչյանը նշելով, որ MT3-82.1 անիվավոր տրակտորը և 385 B մինի ամբարձիչը անհրաժեշտ է համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով անհատույց տրամադրել ''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին:
Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Լսեցին
***<<ԴԻԱԴԻՆ-ՎԱՐԴԵՆԻՍ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն «Դիադին-Վարդենիս» հիմնադրամ գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար (այսուհետ՝ կառավարիչ) նշանակել Կարեն Վիկտորի Մկրտչյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը առաջարկելով՝ «Դիադին-Վարդենիս» հիմնադրամ գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Կարեն Վիկտորի Մկրտչյանին:

Քվեարկության արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքապետարանի սոցիալական ծախսերից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ.

1/Ղարագոզյան Մարինե Վոլոդի 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ

2/ Խչեյան Մերի Վահանի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

3/ Բադեյան Մետաքսյա Տիգրանի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

4/ Գրիգորյան Լուսինե Սամվելի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

5/ Դաշյան Սուրեն Վլադիմիրի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

6/ Սարգսյան Մարզպետ Ռուբենի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

7/ Խչեյան Գևորգ Գարսևանի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

8/ Քալոյան Տարոն Մարտիրոսի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

9/ Սաղաթելյան Հուրիեր Վանուշի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

10/ Ասոյան Գրիշա Հայկարամի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

11/ Իրցուհոխանյան Լուսիկ Արշակի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

12/ Ավետիսյան Ավետիկ Արամայիսի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

13/ Աղաջանյան Սյուզաննա Սարգիսի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ

14/ Մինասյան Տիգրան Վարդանի 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

15/ Նալբանդյան Մարետա Ռուբենի 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ

16/Սարգսյան Անուշ Արսենի 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ

17/Սարգսյան Հակոբ Կամոյի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարը՝ ներկայացնելով սոցիալապես անապահով ընտանիքներին, որտեղ կատարվել են ուսումնասիրություններ և առկա են արձանագրություններ:
Քննարկման արդյունքում ավագանին որոշեց Մարետա Ռուբենի Նալբանդյանին 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (բուժման նպատակով), Անուշ Արսենի Սարգսյանին 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (բուժման նպատակով), Մարինե Վոլոդի Ղարագոզյանին տրամադրել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ (հրդեհից տուժելու պատճառով), Մերի Վահանի Խչեյանին 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, Տիգրան Վարդանի Մինասյանին 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մնացած սոցիալապես անապահով դիմումատուներին ելնելով բյուջեի հնարավորություններից 20.000 (քսան հազար)-ական ՀՀ դրամ:
Հարցը համարվեց ընդունված միաձայն կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

***,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,, ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը և ներկայացված ծրագիրը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ Ծրագրի շրջանակներում դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին հետևյալ առաջնահերթ խնդրով՝ Վարդենիս համայնքում տրանսպորտային ցացի ձևավորում և կոմունալ ծառայությունների բարելավում

2.Առաջարկի հաստատման դեպքում համայնքի բյուջեից կատարել 5% ներդրում ՍՆՏԶ ԼՖ ծրագրի պահանջներին համապատասխան

3.Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում

4.Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում

5.Հաստատել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ Ծրագիրի նոր ՆԽ կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացնելով Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող ծրագիրը, որը արժանացավ համայնքի ավագանու հավանությանը:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին
***2022ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*//Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ 6-րդ և 25-րդ կետերով և և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

1.Համաձայնություն տալ 2022թվականի ընթացքում Վարդենիս համայնքում նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը՝

1.1. Վարդենիս քաղաքի Բանդեր թաղամասի 2700մ կոյուղու և դրենաժորային համակարգի կառուցում
1.2.Վարդենիսի 4 հատ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում
1.3.Վարդենիս խոշորացված համայնքի Փամբակ, Լուսակունք, Գեղաքար, Նորակերտ, Գեղամասար, Ավազան, Արփունք, Կուտական, Տրետուք, Սոթք, Կարճաղբյուր, Արեգունի, Փոքր Մասրիկ, Ազատ, Շատվան, Ծովակ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի, կապտաժների և ՕԿՋ-ների կառուցում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցի շուրջ ելույթ ունեցավ Կ. Մկրտչյանը ներկայացնելով նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագրերը և համայնքի կողմից կատարվող ներդրումները:
Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022Թ. ''ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 4-րդ կետերով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Վարդենիս համայնքի ավագանու 2022թ. մայիսի 6-ի ''ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 37-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)Հանձնաժողովի կազմում ընդգրկել՝ Վարդենիսի համայնքապետարանին իրավաբանական ծառայություններ մատուցող Ինգա Ավագյանին:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը առաջարկելով Վարդենիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի անդամ ընդգրկել նաև Վարդենիսի համայնքապետարանին իրավաբանական ծառայություններ մատուցող Ինգա Ավագյանին (փաստաբան):
Հարցը դրվեց քվեարկության արդյունքում 14 կողմ 0 դեմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին
***2022-2023ԹԹ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<ը>> կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով <<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> <<Վարդենիս քաղաքի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>>, <ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>>, <ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն >>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի մանկապարտեզ>> <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի <<Եդեմական պարտեզ>> մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Լուսակունք բնակավայրի մսուր-մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների կանոնադրությունները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.<<Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>>, <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել տարեկան 27000 ՀՀ դրամ:

2.<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>>, <ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն >>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի մանկապարտեզ>> <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի <<Եդեմական պարտեզ>> մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Լուսակունք բնակավայրի մսուր-մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ>>, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել ամսական 3000 ՀՀ դրամ:

3.<<Վարդենիս քաղաքի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողական վճարները սահմանել տարեկան 13500ՀՀ դրամ:

4.Սահմանել ծնողական վճարների հետևյալ արտոնությունները՝

1) Միակողմանի ծնողազուրկ երեխաներին 50%:

2) Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին 100%:

3) Մեկ ընտանիքից նույն կազմակերպություն հաճախող 2-րդ երեխայից սկսած 50%:

4) Մանկուց հաշմանդամ երեխաներին 100%:

5) Զոհված ազատամարտիկների ընտանիքերի երեխաներին, Արցախյան ազատամարտի մասնակիցների 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների երեխաներին և Արցախի հանրապետությունից բռնագաղթած երեխաներին 100%:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. խաչատրյանը առաջարկելով սահմանված կարգով ծնողական վճարների արտոնություններ սահմանել:
Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկելով միակողմանի ծնողազուրկ երեխաների զեղչը սահմանել 50%, երկկողմանի ծնողազուրկ երեխաների զեղչը սահմանել 100%:
Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը առաջարկելով զոհված ազատամատիկների ընտանիքերի երեխաներին, Արցախյան ազատամարտի մասնակիցների 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների երեխաներին և Արցախի հանրապետությունից բռնագաղթած երեխաներին զեղչը սահմանել100%:

Հարցը դրվեց քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում 2022 թվականի սեպտեմբերի 1-ին առաջին դասարան հաճախող երեխաների համար պայուսակներ և

գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով Վարդենիսի համայնքի բյուջեից տրամադրել 3.765.000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը՝ նշելով, որ 24.08.2022թ. դրությամբ գրանցված առաջին դասարան հաճախող երեխաների թիվը 460 է (մինչև 2022թ. օգոստոսի 31-ը ժամանակ կա գրանցվելու, ուստի առաջարկվեց ծախսը կատարել 500 երեխայի հաշվով), որոնց համար պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով առաջարկեց Վարդենիսի համայնքապետարանի կողմից, որպես աջակցություն բյուջեի ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծախսերից 3.765.000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ նախատեսել մրցույթային կարգով գնում կատարելու համար:
Հարցը դրվեց քվեարկության արդյունքում կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Համայնքի ղեկավար Ա. խաչատրյանը 13:45-ին հայտարարեց 15 րոպե ընդմիջում:
Համայնքի ղեկավար Ա. խաչատրյանը 14:00-ին հայտարարեց նիստը շարունակելու մասին:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 13-րդ հոդվածի 2-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիսի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել Վարդենիս համայնքի ավագանու անդամներ՝ Արման Մաթևոսյանին, Սաթենիկ Մինասյանին և Դավիթ Շահնազարյանին:

2. Սույն. որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացնելով, որ անհրաժեշտություն կա ձևավորելու համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողով և այդ հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկված լինեն ավագանու անդամներ, ուստի առաջարկեց, որ մեծ խմբակցությունները առաջադրեն ավագանու 2 անդամի, իսկ փոքր խմբակցությունը 1 անդամի:
Ելույթ ունեցավ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ղեկավար Նաիրա Մանուչարյանը և առաջարկեց իրենց խմբակցության կողմից առաջադրել 3 ավագանու անդամի, ինչին ի պատասխան համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ասեց, որ պետք է շարժվել սահմանված կարգով՝ մեծ խմբակցությունները 2-ական անդամ, իսկ փոքրը՝ 1:
Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 14 կողմ 0դեմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ համայնքի ղեկավարի առաջարկությունը համարվեց ընդունված:
Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Վարդան Մարգարյանը՝ համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում որպես <<Միասնական Վարդենիս>> խմբակցության թեկնածու առաջարկեց Դավիթ Շահնազարյանին:
Ելույթ ունեցավ ավագանու անդամ Սևակ Սիմոնյանը և ներկայացրեց, որ <<Քաղաքացիական պայմանագիր>>

խմբակցության կողմից համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում թեկնածու չի առաջադրվում:
ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Մկրտչյանը և ներկայացրեց, որ <<Աhարոն Խաչատրյան>> խմբակցության կողմից համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում առաջադրվում են ավագանու անադմներ Արման Մաթևոսյանի և Սաթենիկ Մինասյանի թեկնածությունները:
Հարցը դրվեց քվեարկության արդյունքում 14 կողմ 0 դեմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատվեց առաջադրված թեկնածուների համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկելու հարցը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/' ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 2022թ. մայիսի 6-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/' ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 35-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ հաստիքացուցակում՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը: Առաջարկելով <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում <<Էստրադային երգի խմբի ղեկավար>> անվանումը փոխարինել <<Ազգային ճաշատեսակների պատրաստման ուսուցման խմբավար>> անվանմամբ սահմանելով 0.75 հաստիքային միավոր, իսկ մնացած 0.25 հաստիքային միավորը ավելացնել <<Ժողովրդական և ժամանակակից պարի խմբավար>> 0.5 հաստիքային

միավորին սահմանելով 0.75 հաստիքային միավոր, իսկ <<Բեմական խոսքի և ասմունքի խմբավարի>> 0.75 հաստիքային միավորը դարձնել 1 միավոր:
Հաշվի առնելով <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրենի դիմումը պայմանավորված այն հանգանգամանքով որ մանկապարտեզում կան բազմաթիվ հերթագրված երեխաներ և անհրաժեշտություն է առաջանում ևս մեկ խումբ ձևավորելու, ուստի առաջարկում եմ հաստիքացուցակում ևս երկու հաստիքային միավոր՝ մեկ դաստիարակ և մեկ դաստիարակի օգնական:
Հարցը դրվեց քվեարկության արդյունքում 14 կողմ 0 դեմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2022թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության 10.08.2022թ.-ի գրությունը՝ թույլատրել համայնքի ղեկավարին 1 201 885 ՀՀ դրամ Վարդենիս համայնքի վարչական բյուջեից ներդրում կատարել համայնքում ստեղծված արտադրագործողների միավորում սպառողական կոոպերատիվի հետ համատեղ 51 923 145 ՀՀ դրամի գյուտեխնիկա ձեռք բերելու համար, որից կոոպեատիվի ներդրումը կազմում է 20%, իսկ համայնքի ներդրումը՝ 5%:

Վերոնշյալ 1 201 855 ՀՀ դրամից համայնքի մասնաբաժինը կազմում է 317 226 ՀՀ դրամ, իսկ կոոպերատիվինը՝ 884 629 ՀՀ դրամ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոոպերատիվը այս պահին չունի համապատասխան վճարամիջոցներ, համայնքը իր վրա է վերցնում նաև կոոպերատիվի 884 629 ՀՀ դրամի ներդրման պարտավորությունը, միաժամանակ, նրա հետ կնքելով համաձայնագիր, որ նշված գումարը նրա հետագա աշխատանքներից գոյացած եկամուտներից կարճ ժամկետում վերադարձվի համայնքին:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ թույլ տալ համայնքի ղեկավարին վարչական բյուջեի 9.1.1.1 գործառնական դասակարգման 4637 տնտեսագիտական հոդվածից այդ նպատակի համար

պակասեցնել 1 201 855 ՀՀ դրամ, այն տեղափոխել 1.6.1.1 գործառնական դասակարգման 4657 տնտեսագիտական հոդվածին:

2. Միաժամանակ նույն հոդվածից պակասեցնել 40000 ՀՀ դրամ, այն ավելացնելով Վարդենիսի <<Մանկական գրադարան>> բյուջետային հիմնարկի 4214 տնտեսագիտական հոդվածին ինտերնետ կապի ծառայություն ձեռք բերելու համար:

3. Ելնելով անհրաժեշտությունից՝ Վարդենիս համայնքի 2022թ.-ի համար հաստատված Ֆոնդային բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 5129 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 2 000 000 ՀՀ դրամ՝ այն ավելացնելով ապարատի ֆոնդային բյուջեի 1.1.1.51 գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածինվարչական գույք ձեռք բերելու համար:

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացրեց օրակարգում ընդգրկված առաջին հարցը: Հարցի շուրջ ելույթ ունեցավ ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը: Նշելով որ անհրաժեշտություն է առաջացել համայնքի 2022 թվականի հաստատված բյուջեում կատարել փոփոխություն:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ թույլ տալ համայնքի ղեկավարին վարչական բյուջեի 9.1.1.1 գործառնական դասակարգման 4637 տնտեսագիտական հոդվածից այդ նպատակի համար պակասեցնել 1 201 855 ՀՀ դրամ, այն տեղափոխել 1.6.1.1 գործառնական դասակարգման 4657 տնտեսագիտական հոդվածին:

2. Միաժամանակ նույն հոդվածից պակասեցնել 40000 ՀՀ դրամ, այն ավելացնելով Վարդենիսի <<Մանկական գրադարան>> բյուջետային հիմնարկի 4214 տնտեսագիտական հոդվածին ինտերնետ կապի ծառայություն ձեռք բերելու համար:

3. Ելնելով անհրաժեշտությունից՝ Վարդենիս համայնքի 2022թ.-ի համար հաստատված Ֆոնդային բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 5129 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 2 000 000 ՀՀ դրամ՝ այն ավելացնելով ապարատի ֆոնդային բյուջեի 1.1.1.51 գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածինվարչական գույք ձեռք բերելու համար: Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդուված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2022 թվականի օգոստոսի 24-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 11 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.2022-2023ԹԹ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022Թ. ''ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.2022ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8.,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,, ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.<<ԴԻԱԴԻՆ-ՎԱՐԴԵՆԻՍ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի օգոստոսի 24-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 24-ը, բացակայում են Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը և Մելանյա Եփրեմյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Աննա Վարդանյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը: 12:15-ին համայնքի ղեկավարը նիստը հայտարարեց բացված: Համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը: Ելույթով հանդես եկավ Կարեն Մկրտչյանը առաջարկելով ավելացնել ևս մեկ հարց՝ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>: Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՔՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյանը

____________________________